

ՄԻՄԲՈԼԸ ՀԱՅ ՍՈՎՈՐՈՅԹՆԵՐՈՒՄ

Խ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

I

Նախնական իրաւունքի զարգացման հարցում շատ գիտնականներ փորձում են ընդունել միայն մի գործօն, այն է կրօնական պաշտամունքը: Այդ սկզբունքով են բացատրուել զեկակարւում նախնական, նմանապէս և հին իրաւունքի սխտեմը կառուցանելիս: Բաւական է միայն յիշել Ֆիւստել զը կուլանժին իր հռչակաւոր «La cité antique» աշխատութեամբ հանդերձ: Սակայն այդ տեսական կառուցուածքը խիստ միակողմանի է ու անհամապատասխան իր բոլոր հիմունքներով: Մարդկային փոխադարձ յարաբերութիւններում գոյացող իրաւաբանական ինստիտուտները ոչ թէ հաւատալիքներից են բղխում, ոչ թէ կրօնական պաշտամունքներից են ինքնաբերաբար ծագում, այլ կեանքի կարիքները, գոյութեան կուում կոպուղ կենսական պայմանները, մի խօսքով «էութեան ձեւերն» են առաջ բերում նրանց:

Կրօնական պաշտամունքը, հաւատալիքը յետագայում արդէն սրբազործողւմ, մի տեսակ հաստատում է այն, ինչ որ տուել, ստեղծել է կեանքը: Այս դէպքում էլ կրօնի գործունէութիւնը դեր է խաղում ոչ թէ հասարակութեան կազմակերպման առաջին նախնական քայլերում, այլ աւելի ուշ, երբ կրօնական ցիրուցան գաղափարները, հաւատալիքների զանազան բեկորները համակուում են և գումարուում որոշակի կրօնական մի պաշտամունքի: «Կրօնական պաշտամունքը հասարակական կեանքի առաջին ժամանակները չէր կարող ունենալ կազմակերպող ազդեցութիւն: Այդ պաշտամունքը հիմնուած է այնպիսի սկզբունքների վրայ, որոնց անկարող էր իւրացնել նախնական վայրենի մարդը, որ հոռու էր տակաւին homo sapiens հպարտ անունը կրելու: Աչքի առաջ ունենալով կրօնական պաշտամունքի ծագումն և զարգացումն, պաշտամունքի, որ բաղկանում է բնութեան երևոյթների, նախնիքների հոգիների և այլն երկրպագելուց, մենք նկատում ենք, որ պաշտամունքը զարգանում էր դանդաղ, գոյանում և ամրանում էր իբրև հասարակական ոյժ գործօնների այնպիսի համախմբման հողի վրայ, որը նախնական մարդը միանգամից անկարող էր բմբռնել. միայն ժամանակի ընթացքում իր յետագայ զարգացման

համեմատ, երբ կուտակուիմ են բաւական թւով դիտողութիւններ և սրանցից հետեղ եղբակացումներ, նախնական մարդն ընդունակ է լինում իւրացնել այդ ու սրբազործել զբանցով հասարակական փոխադարձ յարաբերութիւնները: 1)

Բայց և կայ մի այլ բնորոշ գիծ նախնական կրօնական պաշտամունքի մէջ, որ բնաւ երբէք չէր թոյլ տայ նրան իրաւունքի ստեղծագործող սկզբունք դառնալու: Դա բարոյական տարրի բացակայումն է և ընդհակառակն կողմա նիւթապաշտութեան տիրապետումն, որ հանում է բացարձակ էգոյիզմի: Նախնական մարդու յարաբերութիւնները դէպի իր սրբութիւններն ու աստուածները հիմնւած էին օգտակարութեան սկզբունքի, ուտիլիտա րիզմի վրայ: Նա նրանցից սպասում էր օգուտ, օգնութիւն բը նութեան դէմ կուելիս ու իր կենսական գոյութիւնը պահպանելիս: Ինչպէս որ աստուածութիւնն էր վերաբերւում դէպի մարդը, այնպէս էլ վերջինն էր պատասխանում: Բազմաթիւ ազգագրական փաստեր ակներև ցոյց են տալիս, թէ ինչպէս շատ վայրենիների մէջ սովորական երևոյթ է երես զարձնել իրենց աստուածներից, կտորտել ու անպատուել կուռքերը, վիրաւորել աստուածներին, եթէ իրենց ակնկալածն կամ խնդրուածքը չի կատարւում, եթէ իրենք հանապազ անյաջողութիւնների ու զրժբախտութիւնների են հանդիպում: 2)

Նեղրինքը, երբ իրենց դիւզերին որևէ դժբախտութիւն է պատահում, թողնում են խապառ իրենց խրճիթները, տեղափոխուելով մի նոր տեղ, միեւնոյն աստն բնաւ հոգ չտանելով իրենց կուռքերի վրայ, որոնք իրենց կարծիքով չպաշտպանեցին վերահաս վտանգներից: 3)

Նոյնանման զգացմունքի ու հասկացողութեան հետքեր նկատելի են և հայերի մէջ: Տաթևի շրջանում, եթէ որև նոր շինած տունն անբաղդ էր լինում, միասնելի ու հիւանդութիւնների էր միշտ հանդիպում, նմանապէս և այլ շինութիւնները՝ մարագը, գոմն և այլն, այն ժամանակ տանտէրը տեղափոխուում է շինութիւնը մի այլ տեղ: 4) Նոր-Բայալէտցիների, նմանապէս հայաբնակ շատ տեղերում, խիստ ընդհանրացած է շէմքի պաշտամունքը, «բերող շէմքը», այսինքն յաջողութիւն, առատութիւն բերող, յարգւում

1) Голферинъ. Очеркъ первобытнаго права кр. 12.

2) Спенсеръ—Сціология т. I. ч. I, 338. Самоквасовъ—Сборникъ общаго права сибирскихъ инородцевъ, 1876 г. кр. 12. Гарковъ—Сказанія мусульманскихъ писателей о славянахъ и русскихъ, 1870. кр. 95. Леббокъ—Начало цивилизаціи, кр. 102.

3) Burdo—Niger et Bénoué, voyage dans l'Afrique central, кр. 260.

4) Сборникъ матеріаловъ по описанію племень Кавказа т. XIII, кр. 118.

և սիրւում է ոչ միայն տնեցիներէց, այլև զբնակիցներէց. «չբերող շէմքի» առկ յուռութիւնք են թաղում և այլն, և երբ այս միջոցները չեն օգնում «բերող» դարձնելու, պատ են քաշում, փակելով այդ շէմքը, ու մի ուրիշ տեղից նոր դուռ բաց անում: 1)

Հայ ժողովուրդը զանազան սրբերի և պաշտաման տեղերին դիմելիս միշտ աշխատում է, որքան կարելի է շատ նուէրներ, խոստումներ, մատաղներ անել սիրաշահելու նպատակով, կարծես նոյն իսկ կաշառելու, իր կողմը գրաւելու դիտաւորութեամբ: Այդ բոլորի փոխարէն նա իրաւունք է համարում սրբերից անպայման սպասել հատուցումն իր խնդրուածքների ու աղօթքների, ապա թէ ոչ վարւում է այնպէս, ինչպէս վերը յիշեցինք: Բորչալիում տարածուած է խաչի սեւ մանգալու սովորոյթը: «Երբ մի կին որևէ երկարատև հիւանդութեամբ տանջւում է, կամ որդիք մեռնում են և կամ սիրելիներից մինը սաստիկ հիւանդ է, նետ դնել, փալ բանալ տալով իմանում է, թէ որ խաչիցն է. ապա երեք, հինգ կամ եօթը գիւղ բոքիկ ոտով հետի անցնում է և դռնէ դուռ մուրալով խաչի փայ հաւաքում և խունկ, մոմ սեղանի զարդարանք, մատաղացու առնում, տանում այդ խաչին նուիրում... բայց երբ սրբերի միջամտութիւնն էլ ցանկալի հետևանք չի ունենում և ցաւերը յամառութեամբ շարունակում են մնալ տանը, հետևում է Գ-ի քահանայի օրինակին: Օձուռնում Գ-ի անասունները վարակիչ հիւանդութեամբ բռնուելով, սկսում են կոտորուել, Գ. մի կով է մատղում, զոմում մոմ վառում, խունկ ծխում, որպէսզի «ազար ման ածող հրեշտակներին» աչքը քաղցրանայ իր վրայ ու թողնեն զնան: Սակայն բոլորը զուր է անցնում, և կոտորածն ակելի և սաստկանում է: Այն ժամանակ Գ-ը սաստիկ կատաղում է, վերցնում է մի ահագին մահակ և անասելի հայհոյանքներ ուղղելով այդ հրեշտակներին, սկսում է ուժգին հարուածներ տալ պատերին, առաստաղին և անկիւններին: Հետևեալ օրը կոտորածը իբր դադարում է: 2)

Հայ ժողովուրդը նոյն իսկ ստիպում է սրբերին կատարելու իր խնդրուածքը. այդ նպատակով նա նրանից գողանում է որևէ իր, զրկում է իր պատկանելիքից. այս հաւատալիքը մանաւանդ տիրապետում է ամուլթեան դէպքերում: Ամուլ կանայք երեխայ մահանալու համար ոտաբոքիկ գնում են զանազան սրբերի մօտ: Ուխտատեղիում երեխայ ունենալու բաղձանքն աղօթքով յայտնելուց յետոյ սրբի մասունքի վրայից մի մատանի և այլ որևէ իր են գողանում, խոստանալով, որ եթէ սուրբը կատարէ իրենց

1) Ազգագրական հանգէս, հատ. XVIII, էջ. 90—91.

2) Ազգագրական հանգէս, հատ X, էջ. 314.

ինչդիրը և երեխայ տայ, ոչ միայն զողացած իրը յետ կըբերեն, այլ և մի խաչ կընծայեն: Յիրաւի, երբ երեխայ են ունենում, զողացուած իրի նման մի օրինակ էլ շինել տալով, նմանապէս և մի խաչ, այդ բոլորը կրկին վերադարձնում են սրբին ուխտ գալով:)

Այս փոխադարձ յարաբերութիւնների մէջ ակններև են երկու կողմեայ դաշինքի, պայմանադրութեան բոլոր էական տարբերը: Այստեղ գտնում ենք հին հռովմէական իրաւունքի մէջ ընդգծած այն նշանաւոր սկզբունքը, որ այնպէս բնորոշ էր նախնական դաշանց իրաւունքների էութեանը. «Do, ut des, facio, ut facias...»

Այդ տեսակ կրօնական պաշտամունքի սկզբունքի հետքեր նկատելի են նաև հայ պատմագրների աւանդած մի քանի փաստերի մէջ. յիշենք Սմբատ Մամիկոնեանի պարսից դէմ մղած պատերազմի ժամանակ կատարած աղօթքը-« և նոցա ի բլուրն կլեալ, և զօրացն պարսից բազմացեալ ի վերայ Սմբատայ և Վարազայ, և նոցա կրկնեալ ծունր Աստուծոյ յօգնութիւն կոչելով զսուրբ Կարապետն. յիշեա, ասեն, զերախտիս մեր և որպէս ի հետուստ օգնեցիր, ի մօտոյս մի վերջանար ի մէջ: »

Ակնյայտնի է, որ նախնական կրօնն այդպիսի կրաւորական դրութեամբ ու այդպիսի նիւթապաշտական կողիտ սկզբունքներով տողորուած, չէր կարող իրաւունքի ստեղծագործող ոյժ դառնալ: Ընդհակառակն հէնց այդ կրօնը, զանազան պաշտամունքները ինքնին առաջ են գալիս այն յարաբերութիւններից, որոնք ստեղծուում են մարդու և շրջապատող բնութեան միջև:

Բնութիւնն իր ամբողջութեամբ ճնշող իշխանութիւն ունէր նախնական մարդու վրայ, Մարդկային միտքը, բանականութիւնն անկարող էր թափանցել նրա գաղտնիքների մէջ, անզօր էր բացատրելու առօրեայ բնական երևոյթները: Անյաղթելի զրէթէ խոչընդոտները, անասելի դժւարութիւնները, որոնք կանգնած էին նախնական մարդու առաջ գոյութեան կող կուռում, չէին թոյլ տալիս իրեն յաղթանակել բնութեանը, նուաճել նրա ոյժերը կենսական նպատակների ու կարիքների համար: Հազարաւոր դարեր պիտի անցնէին, որ մարդս կարողանար թօթափել բնութեան ճնշող իշխանութիւնն և իրեն հպատակեցնել, շահագործելով նրա ոյժերը, որոնք այժմ կենսատու աղբիւրներ են դարձել կուլտուրական մարդկութեան գոյութեան համար: Բայց երբ գոյութեան կուռում, իր կեանքի պահպանութեան համար նախնի մարդը խիստ նուազ էր կարողանում կորզել բնութիւնից, միշտ

1) Ազգագրական նամուկ հաս. XI, էր. 135. հաս. XVI էր. 31.

2) Յովհան Մամիկոնեան պատմ. Տարսնոյ.

ենթակայ էր նրա արհաւիրքներին և անընդունակ շահագործելու բնութեան տեսանելի իրերը ու հրեայթները, անշուշտ նրա մրտապատկերների մէջ գոյանալու էր մի հայեացք, թէ որքան անուխի ու սարսափելի էր այդ շքեղատաղ բնութիւնն իր ճշնող իշխանութեամբ, պիտի թագաւորէր նրա էութեան մէջ մի զգացմունք, թէ բնութեան դէմ կռիւն անկարելի, նոյն իսկ անթոյլատրելի է դառնում, եւ նա լցւում էր խոր ակնածութեամբ, ահ ու սարսափով դէպի այդ բնութիւնը: Այդ հայեացքը նոյն իսկ պահպանուել է բուզղայականութեան մէջ: Մարզու ձեռքով բոլորը, ինչ ինքնակամ ստեղծուած չէ, շինած է՝ դատապարտելի է, վասնզի սրբնով նա օրնակելի է անում բնութեան մէջ տիրող ներդաշնակութիւնը: Բայց որովհետեւ այս տեսակ հայեացքի հետևողական կիռատումն պէտք է բուզղայականին մատնէր սրվամահ վախճանի, ուստի գործնական փիլիսոփայութիւնն արգելել էր նրան միայն, կենդանական թագաւորութեան նկատմամբ ձեռք բարձրացնել:

Բնութեան ոյծերից օգտուելու համար նոյն բնութեան դէմ մղուած կռուի անթոյլատրութիւնն և անի զգացմունքը նախնական մարդու կրօնական պաշտամունքի գոյացման առաջի աստիճաններն են: Մեր նպատակը չէ այստեղ կրօնական հայեացքների ծագման ու զարգացման պատմութիւնը գրել, այլ միայն նպատակ ենք դրել ապացուցանելու, որ կրօնական հայեացքներն ու պաշտամունքները իրաւունքի գոյացման դործօններ չեն հանդիսացել: Ընդհակառակն, ինչպէս կրտսնները, թէ իրաւունքն և թէ կրօնական հայեացքները զուգահեռաբար զարգացել են հասարակական կազմակերպութեան մէջ նոյն յարաբերութիւններից, որոնք գոյութիւն են ունեցել փոխադարձաբար մարդու և բնութեան միջև, մարդկութեան կեանքի համապատասխան ձևերում:

II

Բնութեան դէմ մղած գոյութեան կռոււմ նախնական մարդը պիտի գործադրէր այնպիսի միջոցներ ու գէնքեր, որոնք տալիս էր նրան հէնց ինքը բնութիւնը: Նա ամեն բանում պիտի ընդօրինակէր բնութիւնը, պիտի օգտուէր այն օրինակներից ու կաղապարներից, որոնք գտնում էր բնութեան մէջ: Նա պիտի նմանեցնէր բնութեանը իր բոլոր արհեստական գործողութիւնները: Եւ դա կատարոււմ էր ոչ թէ կոյր բնազդով, դիպուածօրէն, այլ նախատեսութեամբ, ընտրութեամբ ու նմանողութեամբ:

Նախնական մաքրը աստիճաններէն կերտուելով, կատարելագործում է այն ստարակներն ու գործողութիւնները, որոնք իր տրամադրութեան նիւթերէն է գրել մայր բնութիւնը՝ գոյութեան կողմի համար:

Գնդապետ Աէն Թօկսը, նախնական ժողովրդների պատերազմների մասին խօսելով, և հետեւ իր «Allgemeine Kulturwissenschaft, Werkzeuge und Waffen երկասիրութեան մէջ նախնական զէնքերն ու գործիքները ուսումնասիրելով, գտնում են, թէ որպիսի ճշտութեամբ մարդն օգտուում է պատերազմների ու կռիւների ժամանակ այն բոլոր եղանակներով, որոնք նա նկատել է ստորին ու վայրի կենդանիների մէջ, թէ ինչպէս զէնքերն ու գործիքները նմանութիւն են ստանում կենդանիների ինքնապաշտպանութեան միջոցներին, այն է եղջիրներին, ժանիքներին, կաշուն, կարծր վահաններին, նոյն իսկ թոյնին: Այդ ամենի մէջ, Տէյլօրի ասելով, մարդկային կեանքի ու գոյութեան ամբողջ ընթացքում բնութիւնը դաստիարակչական դեր է կատարել հնարաւորութիւն տալով մարդուն ընդօրինակել ինքնապաշտպանութեան ու կենսական գոյութեան այն եղանակները, որոնք յատուկ են բնութեանը:)

Անա ընդօրինակելու այդ հոգեբանութիւնն նախնական մաքրու բնատրութեան մէջ տարածուում էր ոչ միայն նիւթական, այլ և մտաւոր ու քարոյական կեանքի վրայ: Այստեղ էլ նա պիտի հետևէր բնութեան գործողութիւններին, զեկավարուէր նրա մէջ տեղի ունեցող կրեոյթներով:

Ահնք վերը առիթ ունեցանք շեշտելու, որ նախնական մաքրը լցուած էր ակնածութեամբ ու վախով դէպի բնութիւնը, որը իր իշխանութեամբ, կարծես իր քմահաճոյքով տնօրինում էր նրա գոյութիւնն: Մաքրը զգում էր բնութեան այդ կազմը, ենթարկուում էր նրան, կապում իր կեանքը նրա հրամանների, նրա ազդեցութեան հետ: Նա տեսնում էր բնութեան արտադրողական ոյժերի նշանակութիւնն և ինքն էլ ստիպուած էր որոշ չափով իր սկզբնական քայլերից արտադրողական գործունէութիւն արձարծել ՚ի նարկէ տարրական չափերով, համապատասխան այն շրջապատող մթնոլորդին, այն բնական յարաբերութիւններին, որոնց մէջ էր գտնուում: Այդ արտադրողական գործունէութիւնը կապուած բնութեան դէմ մղած կռուի հետ հասարակական խրմբակցութիւնների հիմք է դառնում, կենսական գոյութեան անհրաժեշտ պայմանով:

1) Э. В. Тойлоръ-Первобытная Культура, 1896 г. т. I. стр. 57-61.

Սակայն ինչձվ էին արտայայտում բնութեան հրամանները, նրա ճշող տիրապետութիւնը նախնական մարդկութեան վրայ, չնայած, որ սա ամեն կերպ հետևում էր այդ բնութեան ակնածութեամբ ու վախով լցնում: Դա բնութեան այն երևոյթներն էին, որոնք տեղի էին ունենում մարդու կամքից դուրս՝ անկախ նրա արամադրութիւնից. դա այն ղէպքերն, պատահարներն էին, որոնք իբրև բնութեան կարծեցեալ կամք հանդիսանում էին մարդկանց փոխադարձ յարաբերութիւնների միջոցով իբրև օրինակ նմանութեան, իբրև դաստիարակ: Պատահարը ուսուցանում էր, ցոյց էր տալիս, թէ ինչպէս պէտք է վարուել և ինչ անել. նա կարծես օրէնսդիր էր դառնում մարդկանց փոխադարձ յարաբերութիւններում: Այդ հողի վրայ մարդկութեան կեանքում առաջ են եկել հաւատալիքներ, պաշտամունքներ, որոնք ներկայումս պահպանուել են իբրև մտախապաշտութիւններ, առաջ են եկել սովորոյթներ, որոնք նախնական հասարակական կեանքում իրաւաբանական նորմերի ոյժ էին ստանում:

Հետաքրքիր փաստեր է առաջ բերում Տայլօրն այդ ուղղութեամբ: 1)

Հնդիկները չեն ազատում մարդուն, որ ջրահեղձ է լինում սրբազան Գանդէսի ալիքներում: Կամչաղալները երբէք օգնութիւն չեն կարկառի խեղդուողին. ով որ նրան ազատի, ինքը յետագայում կը խեղդուի: Ճանապարհորդ Շտեյլէրը պատմում է նոյն կամչաղալների մասին, որ եթէ մէկն անզգուշութիւնից ջուրն ընկնէր, նրա համար մեծ մեղք էր ազատուելու փորձեր անել. եթէ նրան վիճակուած էր ջրահեղձ լինել, նա պէտք է ենթարկուէր իր բաղդին, իր ճակատագրին և աններելի յանցանք էր ազատուել խեղդուելուց, նրան ոչ ոք տուն ներս չի թողնի, ոչ ոք նրա հետ չի խօսի, ոչ ոք նրան հաց ու կին չէր առաջարկի, համարելով նրան արդէն մեռած: Նոյն իսկ եթէ նա ջուրն էր ընկել ուրիշների ներկայութեամբ, ոչ ոք իրաւունք չունենալով նրան փրկելու, ընդհակառակն զօռով կըրէին ջրի մէջ:

Բօհեմիայում դեռևս 1840 թուին վերադրած մի պատմուածք աւանդում է, որ ձկնորսները չէին համարձակուում ջրից ազատելու խեղդուող մարդուն. նրանք վախենում էին, որ ջրային ուղին իրենց կը զրկէր յաջող որսից և առաջին յարմար զէպքում իրենց էլ կըխեղդէր:

Այս տեսակ հայեացքներ պահպանուել են, թէև թոյլ հետքերով, նաև հայ ժողովրդի մի քանի հաւատալիքներում:

1) Тейлор-Первобытная Культура, т. 1. стр. 87-100

Տաճկահայերի մէջ մի նախապաշարմունք կայ, որով այն հաւատն է արտայայտուում, թէ եթէ մարդս մեռնելու է, թող մեռնի շուտով. «Մանկան երկար հիւանդութենէն իտքը, տեսնելով, որ ապրելու յոյս չկայ, կին մը կը տանի գերեզմանատուն, հոգեհանգստեան քարին վրայ կը նետէ և ուրիշ մը գալով «կամ քեզի, կամ մեզի» ըսելով մանուկը կ'առնէ և առանց յետ նայելու տուն կը տանի»։¹⁾ Շատ տեղերում հայ գիւղացին ցանքսի ցորենից չի մաքրում որոմի սերմերը և այդպէս էլ ցանում. նա հաւատացած է, որ այդպէս էլ լինելու է, այդպէս էլ բնութիւնից դրուած է, վամնզի որոմը առաջանում է ոչ թէ առանձին սերմից, այլ կերպարանափոխուում է ցորենից, մարդկանց մեղքերի պատճառով։ Ուստի աշխատում են մեղք չգործել, որ ցորենի արտերն ազատ մնան որոմից։

Նոյն բնատրութիւնն է կրում Լօռեցիների սովորութիւնը, ընաւ չխօսել բնութեան տարրերի ու երևոյթների մասին, կարծիք չյայտնել այդ առթիւ։ Մրա պատճառը նրանք բացատրում են հետեւեալ հրաշապատումով։ «Մի անգամ մի բանիմաց գիւղացի էջն առաջը ձգած գնում է անտառ փայտ բերելու։ Այստեղ նա պատահում է մի անծանօթ մարդու, որի հետ երկնային մարմինների մասին երկար զրոյց է անում, կարծիք յայտնում երկնակամարի վրայ երկացող լուսնի մասին և այլն։ Անծանօթը, որ հայր Յովսէփն է լինում, ձանձրացած այն բանից, որ նա շարունակ բարձր բաներից է խօսում, ձեռք զաւազանով խփում է նրան ու էշ դարձնում, բոլորովին նման նրա իշին։ Ապա փայտ բարձում վերան և ասում. «Գնա ուղղակի տունդ, և կաց այստեղ, որքան էլ որ կինդ թակէ քեզ, որպէսզի իմանաս թէ քո տանդ ինչ է կատարւում, մինչդեռ դու այդ թողած՝ երկինքն ես քննում»։ Գիւղացին գնում է տուն իշի կերպարանքով. կինը վերցնում է փայտը և քշում գոմը։ Քիչ անցած նա տեսնում է, որ կինը, որի հաւատարմութեան մասին ընաւ չէր կասկածում, ընդունում է մի մարդու և ամբողջ գիշերը նրա հետ անցկացնում։ Առաւօտեան վազում է էշ դարձած գիւղացին անտառ, գտնում հայր Յովսէփին և լիզում նրա ոտները։ Հայր Յովսէփը կրկին նրան մարդ է դարձնում։ Եւ այնուհետև նա թողնում է իսպառ երկնային մարմինների մասին դատելը։²⁾

Բնութեան չգիմադրելու նոյն գաղափարն չի պարփակւում արդէօք զանազան գիշատիչ կենդանիների, մնասակաւ սողունների և այլ պաշտամունքի մէջ, դորօրինակ օձերի։ Ինչպէս յայտնի է,

1) Բիւրակն 1899, № 28, էր. 439—440.

2) Ազգագրական հանդէս, գիրք X էր. 107.

հայ ժողովրդի մէջ, այն օձերը, որոնք երևում են տներում, կամ որոշ տեղերում, սուրբ են համարում և չեն հալածում կամ օչնչացնում: Գանձակ գաւառում չեն ոչնչացնում մօրեխներին, երբ սրանք անպին ֆասս են հասցնում արտերին:

Երբ մօրեխներ գիւղ են թափում, բոլոր գիւղացիները, սարսափահար, մեծ քանակով բրինձ են խաշում և լցնում նրանց թոսը, խնդրելով, որ ուտեն և հեռանան. երկիւղ կրկիւղ, գիւղացիները ընաւ չեն սպանում մօրեխներին: ¹

Վերջապէս նոյնն ենք տեսնում այն համատարած հաւատալիքի մէջ, որ այնքան արբայետող դեր է կատարել և տակաւին կատարում է մարդկութեան մէջ մինչև օրս. դա հակատագիրն է: Ծակատագրի, կանխորոշ բազդի մէջ նախնական մարդն այն համոզումն էր դաւանում, թէ ընութեան իշխանութիւնից անկարող է դուրս՝ գալ և պէտք է հպատակուի, չդիմադրի նրա կամքին: Ինչ սոսկալի չափերի չի հասել այդ նախապաշարմունքն իր սնտախապաշտումներով հանդերձ հայ ժողովրդի հասարակ ու կրօնական յարաբերութիւններում, նրա բովանդակ կեանքի բոլոր ապտիճաններում, սկսած մանկութիւնից՝ կեանքի առաջին շնչից մինչև մահուան վերջին հարաշը: Ծակատագիրն, հայ ժողովրդի հաւատքով ոչ միայն մարդիկ, այլ և սրբերը անզօր են խափանելու: ²

Վերոյիշեալ օրինակներից կարող ենք եզրակացնել, որ նախնական մարդն իր գործողութիւններում աշխատում է նմանուել, հետևել ընութեան երևոյթներին: Իր գործունէութեան սահմանն ու եզանակը նա տեսնում է այն օրինակներում, որոնք կըրկնում են միշտ ընական երևոյթներում: Նա ոչ միայն չի հակադրում ընութեան վնասակար ազդեցութեանը, ոչ միայն չի ձգտում վերացնել այն պայմանները, որոնք սպառնում են նրա կեանքին, ֆասսում նրա գոյութեանը, այլ ինքն էլ իր կարգին, իր կամքով կատարում է նոյն գործողութիւնը, նոյն իսկ իր սրբազան պարտքն է ստիպում այդպէս վարուելու: Նա տեսնում է, որ մարդիկ ընութեան տարրերային պատահաններին ենթարկուելով, խեղդուելով, ժայռերից դահավիժուելով, օձերի ու զանազան գիշատիչների բաժին դառնալով և այլն. մահանում են, ուրեմն և ինքն էլ պարտաւոր է սրբազործել այդ ամենն: Բնութիւնը նրան ուսուցանում էր, թելադրում, թէ ինչ անել և ինչպէս վա-

1) Լալայեան Վարանդա, եր. 212 — 214. Ազգագրական հանդէս, Վերջ X եր. 19.

2) Ե. Լալայեան Գանձակի գաւառու հատ. Բ. եր. 113

3) Ե. Լալայեանի Վարանդա. եր. 247.

րուել որոշ երևոյթներ յանդիման: Նա տեսնելով, որ մարդիկ ջրահեղծ են լինում, զոհւում ջրին, որոշում է, որ անհրաժեշտ է իր դոյուքեան պահպանութեան համար ինքնարեքարար զոհաբերութիւններ անել ջրին. բնական այլ երևոյթներին համար չենք:

III.

Եթէ նախնական մարդը միշտ ակնածութեամբ ու ահով էր վերաբերում զէպի բնութեան երևոյթները, կենսական նշանակութիւն էր տալիս պատահարներին ու ղէպերին, որոնք հեղինակաւոր միջոց էին համարուում զանազան անհատական ու հասարակական հարցերի լուծման համար, միանգամայն հետևողական կը լինէր ու մեզ հասկանալի, որ նախնի մարդու մէջ հաստատուում էր համոզմունք, թէ երբ զէպը չի գալիս ինքնարեքարար ներան օգնութեան, այն ժամանակ նա պիտի աշխատի այդ արհեստօրէն առաջացնելու, գոյացնելու: Այս հայեացքի վրայ են հիմնուած շատ երևոյթներ նախնի հասարակութիւնների կրօնական ու իրաւարանական փոխադարձ յարաբերութիւններում: Այդ հայեացքի վրայ են կառուցուած զանազան սովորութիւններ ու սնտոխապաշտումներ, որոնցով հայ ժողովուրդը երաշտ ժամանակները մէջոցներ է ձեռք առնում անձրև առաջ բերելու:

Երկնք այստեղ համատարած ու բնորոշ սովորութիւնը՝ Նուրին մանածելը, որը մի քանի գաւառներում, ինչպէս Նոր-Բայազետում յայտնի է խուշկուրուրիկ անունով:՝) Երեխաները խուշկուրուրիկ են շինում, այսինքն մի ցախաւելի վրայ շորեր են գցում, ծայրին մի փափախ ծածկում, մի փայտ էլ գլխի մօտից հօրիզոնական ձևով անցկացնում, որ թևեր ձևացնելի նպատակով այս թևերից բռնած ման են ածում դռնէ դուռ և երգում.

Պուշկուրուրիկն էկեր ա,
Շալէ շապիկ խագեր ա,
Ջովէ գոտիկ կապեր ա,
Երկնուց ցօղ ա ուզում,
Գետնից պտուղ ա ուզում,
Եղ բերէք՝ պորտին քսենք,
Ձու բերէք՝ թաթին դնենք:

Տանեցիները դուրս են բերում մի ամանով ջուր և խուշկուրուրուկի գլխին, մասամբ էլ նրան ման ածող երեխաների

1) Ազգագրական Հանդէս—XVII եր. 96 հատ. X, եր. 200—203. Сборникъ матеріаловъ по описанію племенъ и народовъ Кавказа, XIII. Татевъ-стр. 116.

վրայ են ածում: Ապա երեխաներին ձու և իւղ են տալիս, որ տանեն ձուածեղ անեն, ուտեն զուարճանան: Տաճկահայերի մէջ էլ խիստ տարածուած է այս սովորութիւնը և այդ տիկնիկը կոչուում է խունձկուրուր կամ խունչկուրուրիկ: ¹⁾

Արդեօք Վարդավառին իրար վրայ ջուր ածելն, տօնի որ հին հայոց նաւասարդ ամսուայ առաջին օրերին է հանդիպում ²⁾, չի՞ պարփակում նոյն գաղափարն: Այդ ջրի սրսկումով հաւատում էին ամբողջ տարի ունենալ բարեբեր անձրևներ բուսականութեան համար:

Նոյն նպատակով սովորութիւն կայ շատ տեղերում, որ չորս կամ հինգ այրի կամ ամուր կանայք լծւում են արօրին ու տղամարդու շորեր հագած, մի ուրիշ կինմարդ մաճկալի առաջնորդութեամբ վարում է գիւղի շորացած գետակի կամ առուների ունը: ³⁾

Նմանապէս և հակառակն: Երբ խիստ շատ անձրևներ են գալիս ու փշացնում բուսականութիւնը, դիմում են որոշ միջոցներ, որպէսզի արհեստականօրէն առաջ բերեն այնպիսի դէպք, որը իրենց անհրաժեշտ է: Ջուրը ցամաքում է գործընթացում: Ուտի Տաթևի շրջանում պառաւ կանայք, երբ ուզում են դադարեցնել ևրկարատե անձրևները, վերցնում են ամանով անձրևի ջուրը, եռացնում կրակի վրայ, մինչև որ ամբողջ ջուրը շոգիանայ: ⁴⁾

Բացի այդ՝ կան նաև բազմատեսակ այլ սնտիապաշտուհներ, որոնցից յիշատակենք միայն մի քանի բնորոշները: Բորչալուի գիւղերում «նուրին» ման ածող երկու երեխաները եօթը դռնից ցելս են հաւաքում, եօթը գնդակ շինում, ապա քահանայի տանից մի աւել գողանում, վառում և այդ գնդակները մէջը ձգում: Ցեխն այստեղ այն նշանակութիւնն ունի, ինչ որ ջուրը. չի՞ որ ցելսը գոյացել է երկարատե անձրևներից... Ոմանք էլ նոյն նըպատակով կանանչ խոտը կրակի մէջ են ձգում, վառում: ⁵⁾

Ոչ միայն բնութեան պատահարներն են արհեստական եղանակով առաջացնելու ջանում, այլ այնպիսի պատահարներ, որոնք անմիջապէս կցորդուած են իրենց կեանքի, իրենց ֆիզիկական գոյութեան հետ. մի գոյութիւն, որ անշուշտ կապուած էր նախնի մարդու հայեացքով բնութեան երևոյթներին հետ:

1) Փնջիկ. 1908 թ. № 25. Եոյս. 1897 ՄՄ № 305—306, 330.

2) Ալիշան—հին հաւասք, Կր. 305—36.

3) Ազգագրական հանգէս, XVII, Կր. 96. Նոր-Պար 1899 թ. № 72 Ազգագրական հանգէս X, Կր. 201. Сборникъ матеріаловъ, XIII. Татевъ.

4) Сборникъ матеріаловъ, XIII, Կր. 511

5) Ազգագրական հանգէս, X, Կր. 202.

Այս դադափարին պէտք է վերագրել վիճակի նշանակու-
թիւնը: Յայտնի է, թէ ինչ մեծ դեր է խաղում վիճակ գցելը,
վիճակ հանելը հայ ժողովրդի հաւատալիքներում: Վիճակով են
որոշում իրենց գրութիւնը, իրենց անելիքը, իրենց ապագան:
Բաւական է յիշել Համբարձման տօնին կատարուող վիճակը հայե-
րի մէջ: Բնութեան ծաղիկների ու ջրի միջոցով են այդտեղ
պատասխան որոնում իրենց բազդի ու կեանքի հարցերին:

Նոյն դադափարն էին պարունակում թէ հին հայերի հեթա-
նոսական կրօնի և թէ յետագայ նախապաշարունակների մէջ տիրող
գուշակութիւնները զանազան բնական երևոյթների միջոցով, ծա-
ռերի սոսափիւնի, կայծակի որոտումների, կրակի և ջրի, զանա-
զան թռչունների և կենդանիների և այլն:

Իսկ թէ ի՞նչ ձևով դեր է խաղում վիճակը իրաւական յա-
րաբերութիւններում և ի՞նչպէս է նա արտայայտւում հայ ժողո-
վրդի իրաւաբանական հայեացքներում, դա կը տեսնենք յետագայ
գլուխներից մէկում:

IV

Ուրեմն նախնի հայերի սոցիալ կուլտուրական միջավայրը,
նման միւս ժողովրդների, կազմակերպւում է շրջապատող բնու-
թեան ազդեցութեան ներքոյ, երբ գոյութեան կռիւը, փոխադարձ
յարաբերութիւնները դէպի բնական երևոյթները դառնում են գոր-
ծօններ նրա իրաւաբանական ու կրօնական աշխարհայեացքների:
Այդ կրօնական միջոցորդն իր բովանդակ ծաւալով, որ պարփա-
կուած է հաւատալիքների, սնտիապաշտունների և այլ համանման
երկրպագուների մէջ, ինչպէս և նրա իրաւաբանական ամբողջ
ըմբռնումն, որ բաղկացած է հասարակական փոխադարձ յարաբե-
րութիւններն նաև դէպի շրջագայ բնութիւնն ունեցած վերաբե-
րմունքը կարգաւորող նորմերից, առաջ են եկել նախնական մար-
դու և խմբակցութիւնների կողմից բնութեան երևոյթներին հե-
տեկու և ընդօրինակելու արհեստական գործողութիւններից:

Այդ գործողութիւնների դարևոր, անդադրուն կրկնումներից
թէ իրաւաբանական հայեացքներում տրամաբանօրէն ստեղծ-
ւում են ծիսական ու սիմբոլիկական գործողութիւններ: Սիմբոլներն
ու ծէսերը այնպիսի գործողութիւններ են, որոնք արտադրում են
ֆիզիկական ձևով որոշակի հասկացողութիւն, մտապատկեր. ընդ
սմին այդ ֆիզիկական արտադրութեանը վերագրւում է այնպի-
սի բնոյթ, թէ իբր բնութիւնն ինքն է արտադրում այդ գործո-

դուժիւնները միանգամայն մարդու կամքից անկախ թէ ինչ մեծ նշանակութիւն են ունեցել և ունեն ծիսական կարգերն ու սիմբոլական գործողութիւնները մարդկային կեանքում, նրա կուլտուրայի ամբողջ զարգացման ընթացքում, դա երևում է մեզ հասած բազմաթիւ փաստերից: Երոնք բնորոշում են զանազան ժողովրդների և կրօնական և իրաւաբանական աշխարհքների էութիւնը. փաստեր, որոնք անսպառ ու հսկայական նիւթ են մատակարարում մեծաքանակ գիտական ուսումնասիրութիւններին:

Սակայն միևնոյն ժամանակ այդ փաստերը ցոյց են տալիս գրեթէ միշտ, որ ծիսական կարգերը, իբրև կրօնական պաշտամունքներով ու հաւատալիքներով տոգորուած երևոյթներ, կլանում են ամբողջովին սիմբոլական գործողութիւնները, տալով վերջիններին կրօնական ընոյթ: Հենց այս պարագան շատերին առիթ էր տուել իրաւաբանական ինստիտուտների գոյացման հարցում ամենազլխաւոր գործօնի դերը յատկացնել կրօնական պաշտամունքին, ժողովրդական հաւատալիքներին: Բայց ինչպէս վերը տեսանք, կրօնական ու իրաւաբանական հայեացքների գոյացումն իրենց սկզբնական աստիճաններում միանգամայն անկախ էին, երկուսն էլ հաւասարապէս ենթարկուելով միևնոյն գործօնի ազդեցութեանը, գործօնի, որը պարփակուած էր շրջապատող բնութեան մէջ: Միայն ժամանակների ընթացքում, յետակայ սօցիալ-կուլտուրական զարգացման համեմատաբար բարձր աստիճաններում, երբ ժողովրդական հաւատալիքները համակուցին որոշ կրօնական փիլիսոփայութիւնների, զաւանաբանական սիստեմների հանդերձ իրենց կազմակերպուած հոգևոր միջնորդներով մարդկութեան ու աստուածութիւնների միջև, ահա այդ այլևոր, խորն հնութեան մէջ թաղուած ժամանակներից ըսկսեց քայլ առ քայլ կրօնական աշխարհայեացքը տիրապետել մարդկային խմբակցութիւնների բովանդակ կեանքի կողմերին, նրա սոցիալ հասարակական փոխադարձ յարաբերութիւններին, ուրեմն և նրա ամբողջ իրաւաբանական աշխարհայեացքին. սկսեց ներս սողալ իր կրօնական աստուածային գաղափարով տոգորուած նորմերով բոլոր իրաւաբանական ինստիտուտների մէջ:

Ներկայ յօդուածիս շրջանակներից դուրս է վերլուծել ծիսական կարգերը ու սիմբոլական գործողութիւնները, որոնք տիրապետում են հայ ժողովրդի կրօնական ու իրաւաբանական մթնոլորդներում: Հայ ծիսական կարգերի մասին արդէն տալիս է մի ուսումնասիրութիւն Սպենսերի հետևողութեամբ պ. Ե. Լալայեանը (տես Ազգագրական հանդէս XXI հատ.):

Նպատակ ունենալով միայն վերլուծել սիմբոլական գործողութիւնները, որոնցով ընորոշուում են հայ ժողովրդի սովորութեան իրանուներ զանազան կողմերը, մենք առ այժմ մի կողմն ենք թողնում կրօնական բնոյթ կրող սիմբոլները, վերապահելով դա ժողովրդական պաշտամունքի ու հաւատալիքների ուսումնասիրութեանը: Բաւական էր, որ շեշտեցինք, թէ ինչ դեր է խաղում և ինչ նշանակութիւն ունի հաւատալիքը, կրօնական աշխարհայեացքը իրաւաբանական ինստիտուտների ծագման ու գոյութեան նկատմամբ և թէ ինչ փոխադարձ յարաբերութեան մէջ են գտնուում այդ երկու կատիգորիայի հիմնարկութիւնները:

Սիմբոլը յունարէն բառ է *συμβολον* որ թարգմանուում է նշան, խորհրդանիշ: Ընդհանրապէս սիմբոլ ասելով պիտի ներկայացնենք մեզ որոշ գաղափարի կամ դաստիարակչի պատկերացումն, իրեն յատուկ մի ձևի, կերպարանքի մէջ: Իսկ ժողովրդական իրաւաբանական կացի նկատմամբ սիմբոլը իրաւաբանական գործողութիւնների այլաբանական պատկերացումն է: Նախնական կուլտուրական աստիճաններում, մարդս զուրկ լինելով որոշ երևոյթներն ու գործողութիւնները առարկայացնելու, վերացականացնելու ընդունակութիւնից, հակուած էր միշտ իր բոլոր իրաւաբանական յարաբերութիւններին վերաբերեալ հասկացողութիւններն ու մտքերը արտայայտել զգայական, կոնկրէտ պատկերացումներով: Տուրևառի, դաշնաց, ընտանեկան և ընդհանրապէս քաղաքացիական կեանքի մէջ համաձայնութիւններ կայացնելիս նախնական մարդը, ինչպէս քանիցս յիշել ենք, հետևելով շրջապատող բնութեանը, իր իրաւաբանական հասկացողութիւնները վերածուում է տեսանելի առարկաների ու գործողութիւնների, որոնք տպաւորուում են նրա յիշողութեան ու մտապատկերների մէջ, զբօշմուում են նրա գրայարանքներում և այդպիսով դառնում այդ հասկացողութիւնների սիմբոլներ: Նոյն իսկ մեր օրերում ժողովուրդը գտնադան իրաւաբանական համաձայնութիւններ ու գործողութիւն կատարելիս, սովորաբար գիտնում է որոշ ծիսական, սիմբոլական ձևակերպումների, որոնք ժողովրդական իրաւագիտակցութեան մէջ խորհրդաւոր նշանակութիւն ունին և պարտադր են համարուում: Միայն այդ սիմբոլական ձևերի շնորհիւ նրա իրաւաբանական հասկացողութեան մէջ կանգուն է մնում իրաւաբանական յարաբերութիւնները կարգաւորող նօրմերի կօնկրէտ ոյժը: